ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ IV, № 5, 1951 Биол. и сельхоз. науки

ՀԱՄԱՌՈՏ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ս. Պ. Մանդոյան

# ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՍԻՄՊՈԴԻԱՅԻ ԳՈՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԿ. ՍՍՌ-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

*Բամբակենու վաղահասության խնդրում կարևոր նշանակություն ունի նրա զարգացման փուլերի արագ հաջորդումը մեկը մյուսին։ Բամբակենու բույսի կազմավորման պրոցեսում մեծ տեղ է գրավում այն հանգամանքը, թե որ հանգույցի վրա է գոյանում առաջին պտղատու ճյուղը։ Վաղահաս սորտերի մոտ առաջին պտղատու ճյուղը գոյանում է գլխավորապես 3-րդ և 4-րդ հանգույցների վրա, հաճախ 2-րդ և երբեմն առաջին հանգույցի վրա, միջահաս սորտերի մոտ՝ 5-րդ և 6-րդ հանգույցների վրա, իսկ ուշահաս սորտերի մոտ՝ 8-րդ-ից մինչև 10-րդ և ավելի հանգույցների վրա։ Այսպիսով, որքան ցածր հանգույցների վրա է կազմակերպվում առաջին պտղատու ճյուղը, այնքան ավելի վաղահաս է լինում սորտը։*

*Բամբակենու վաղահասության կապակցությամբ առաջին պտղատու ճյուղի առաջացման խնդիրը կարևոր համարելով, մենք ձեռնարկեցինք այդ հարցի ուսումնասիրությանը մի քանի ուղղությամբ։*

*Պարզված է այն, թե ինչ ազդեցություն է ունենում ցանքի խտությունը առաջին բերքատու ճյուղի գոյացման արագության վրա։ Այս հարցի հետազոտությունը կատարված է Էջմիածնի շրջանի Փարաքար գյուղի կոլխոզում ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Գ. Հ. Բաբաջանյանի և գիտությունների թեկնածու Ս. Դ. Բարսեղյանի կողմից դրված բամբակենու երկշարքային ցանքի փորձահրապարակում, որտեղ կատարվել է խաչաձև կուլտիվացիա։ Արդյունքները բերում ենք № 1 աղյուսակում։*

Աղյուսակ 1.

*Բամբակենու ցանքի խտության ազդեցությունը առաջին պտղատու ճյուղի առաջացման վրա*

| Սորտ | Ցանքի խտությունը | Հետազոտված բույսերի թիվը | Առաջին պտղատու ճյուղի առաջացումը (տոկոսներով): 3-րդ հանգույցի վրա | 4-րդ հանգույցի վրա | 5-րդ հանգույցի վրա | 6-րդ հանգույցի վրա | 7-րդ հանգույցի վրա | 8-րդ հանգույցի վրա | M միջին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1298 | Մեկ բնակետում 2 բույս | 494 | 37,2 | 49,2 | 12,8 | 0,4 | 0,2 | 0,2 | 3,78 |
| | Մեկ բնակետում 8 բույս | 383 | 33,9 | 50,7 | 12,5 | 2,6 | 0,3 | 0,0 | 3,85 |

*Աղյուսակից երևում է, որ 3-րդ հանգույցի վրա առաջին բերքատու ճյուղ ունեցող բույսերի քանակը բնակետում 2 բույս լինելու դեպքում 3,3%-ով ավել է, քան նույն հանգույցի վրա, մեկ բնակետում 8 բույս*

լինելու դեպքում։ Համարյա նույն հարաբերությունը երկու վարիանտների նկատմամբ քիչ ոչ էական չափով պահպանվում է 4-րդ, 5-րդ և այլ հանգույցների վրա։ Աննշան է նաև առաջին սիմպոդիալի միջին բարձրությունների (M) տարբերությունը (3,85—3,78)։ Ուստի կարելի է եզրակացնել, որ խտությունը երկշարքային ցանքի խաչաձև կուլտիվացիայի դեպքում միջակ հողերում, ինչպես առավել ևս թույլ հողերում, չի ազդում առաջին սիմպոդիալի առաջացման պրոցեսի ընթացքի վրա։ Այլ կերպ ասած, չի ազդում բամբակի հասունացման պրոցեսի վրա։ Ի. Վարունցյանի [1] փորձերը ցույց են տալիս, որ խտությունը չի փոխում այն բարձրությունը (ըստ հանգույցների), որի վրա գոյանում է առաջին սիմպոդիալ ճյուղը։

Առաջին բերքատու ճյուղի գոյացումը բամբակենու ցողունի տարբեր բարձրությունների վրա կապված է սորտի հետ, սակայն այդ խնդրում կարևոր դեր են կատարում նաև շրջապատի պայմանները։ Մասնավորապես վեգետացիոն շրջանի ընթացքում աննպաստ պայմանների դեպքում ուշահաս սորտերի մոտ առաջին սիմպոդիան առաջանում է ավելի բարձր հանգույցների վրա, քան նպաստավոր պայմանների դեպքում։ Այլ կերպ ասած աննպաստ պայմանների դեպքում հասունացումը ուշանում է։ Ա. Ջեբլիեր [2] նպաստավոր պայման է համարում առաջին վեգետացիան ջրի համընկնելը բուսականության սկզբի հետ։ Բ. Գ. Սարդամայր [3] գտնում է, որ ջրի և սննդի ավելորդ քանակի դեպքում, առաջին բերքատու ճյուղի գոյացմանը նախորդում են մի քանի ոչ բերքատու ճյուղեր [2—3]։ Ըստ Գ. Գ. Թումանյանի [4] ուսումնասիրությունների, եգիպտական Փուադի Λ—06-ի նկատմամբ, հարուստ բերրի հողերում բամբակենու բույսերի առաջին սիմպոդիալ ճյուղը գոյանում է ավելի բարձր հանգույցների վրա, քան աղքատ հողերում։ Օրինակ՝ հարուստ հողերում առաջին սիմպոդիան 67%-ով կազմակերպվում է մինչև 8-րդ հանգույցի վրա, իսկ աղքատ հողերում նույն բարձրության վրա՝ 81—87%։

Մեր ուսումնասիրությունների 2 տարվա արդյունքները տարբեր սորտերի վերաբերյալ առաջին բերքատու ճյուղի առաջացման նկատմամբ բերում ենք № 2 աղյուսակում։

2-րդ աղյուսակից երևում է, որ վաղահաս սորտերի նկատմամբ այն է՝ 1298, С 3210 և Од—1, բույսերի մեծագույն մասի մոտ առաջին բերքատու ճյուղը կազմավորվում է գլխավորապես 3-րդ և 4-րդ հանգույցների վրա։ Իսկ ուշահաս սորտերի մոտ նրա առաջացումը ձգձգվում է, տեղափոխվելով մեծ մասամբ 9-րդ, 10-րդ և ավելի բարձր հանգույցների վրա (С 450 555)։

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Միջակ հողերում խաչաձև կուլտիվացիայի դեպքում ցանքի խտությունը չի ազդում առաջին բերքատու ճյուղի գոյացման ընթացքի վրա, կամ չի ազդում բամբակի հասունացման ընթացքի վրա։

2. Վեգետացիոն շրջանի աննպաստ պայմաններում առաջին բերքատու ճյուղը ուշահաս սորտերի նկատմամբ առաջանում է համեմատաբար ավելի բարձր հանգույցների վրա, որով և ձգձգվում է հասունացման շրջանը։

ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Բույսերի
գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտ

Ստացվել է 9 IV 1951

Աղյուսակ 2

Միջին Ասիայի բամբակենու սորտերի առաջին բերքատու ճյուղի կազմավորման բարձրությունն ըստ հանգույցների՝ ՀՍՍՌ-ի պայմաններում

| №№ ը.կ. | Սորտ | Տարիները | Հաշվառված բույսերի քանակը | Առաջին բերքատու ճյուղի դասավորումը ըստ հանգույցների (տոկոսներով): 3-րդ հանգույցի վրա | 4-րդ հանգույցի վրա | 5-րդ հանգույցի վրա | 6-րդ հանգույցի վրա | 7-րդ հանգույցի վրա | 8-րդ հանգույցի վրա | 9-րդ հանգույցի վրա | 10-րդ հանգույցի վրա | 11-րդ հանգույցի վրա | 12-րդ հանգույցի վրա | 13-րդ հանգույցի վրա | 14-րդ հանգույցի վրա | Միջին բարձրությունը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1298 | 1949 | 33 | — | 66,7 | 33,3 | — | — | | | | | | | | 1,33 |
| | | 1950 | 83 | 31,3 | 41,0 | 16,9 | 7,2 | 3,6 | | | | | | | | 1,11 |
| 2 | C 3210 | „ | 33 | — | 45,4 | 36,4 | 18,2 | — | | | | | | | | 5,03 |
| | | „ | 83 | 15,7 | 44,6 | 34,9 | 4,8 | — | | | | | | | | 1,24 |
| 3 | Од—1 | „ | 31 | 12,9 | 67,8 | 16,1 | 3,2 | — | | | | | | | | 1,10 |
| | | „ | 71 | 49,3 | 39,4 | 11,3 | — | — | | | | | | | | 3,62 |
| 4 | 18819 | „ | 36 | — | 2,8 | 47,2 | 38,9 | 11,1 | — | | | | | | | 5,58 |
| | | „ | 84 | 3,6 | 26,2 | 38,1 | 23,8 | 7,1 | 1,2 | | | | | | | 5,08 |
| 5 | 133 ф | „ | 36 | — | 66,6 | 30,6 | 2,8 | — | — | | | | | | | 6,36 |
| | | „ | 89 | 1,1 | 15,7 | 27,0 | 22,6 | 19,1 | 4,5 | | | | | | | 5,56 |
| 6 | C 3351 гр 181 | „ | 13 | — | — | 38,5 | 23,1 | 36,1 | — | | | | | | | 6,00 |
| | | „ | 80 | — | 16,2 | 25,0 | 38,3 | 22,5 | — | | | | | | | 5,65 |
| 7 | C 450 гр 555 | „ | 36 | — | — | 5,5 | 11,7 | 33,3 | 16,7 | 0,0 | 2,8 | — | | | | 6,72 |
| | | „ | 78 | — | 1,3 | 0,0 | 5,1 | 7,7 | 15,4 | 23,1 | 19,2 | 12,8 | 7,7 | 6,1 | 1,3 | 9,47 |
| 8 | 108 ф | „ | 33 | — | — | 3,0 | 57,6 | 33,1 | 3,0 | — | — | | | | | 6,39 |
| | | „ | 83 | — | 1,2 | 6,0 | 15,7 | 41,0 | 31,1 | 1,7 | — | | | | | 7,10 |
| 9 | C 1225 | „ | 37 | — | 2,7 | 29,7 | 51,1 | 13,5 | — | — | — | | | | | 5,78 |
| | | „ | 87 | — | — | 11,9 | 20,7 | 33,3 | 23,0 | 8,0 | — | | | | | 5,89 |
| 10 | C 460 | „ | 33 | — | — | 6,1 | 45,5 | 33,3 | 6,1 | 3,0 | 3,0 | 3,0 | — | — | | 6,76 |
| | | „ | 76 | — | 2,6 | 6,6 | 11,9 | 22,4 | 19,8 | 10,5 | 11,8 | 7,9 | 3,9 | 2,6 | | 8,11 |
| 11 | 8517 | „ | 31 | — | — | 14,7 | 67,7 | 14,7 | 0,0 | 2,9 | — | | | | | 6,09 |
| | | „ | 83 | — | 1,2 | 14,5 | 21,7 | 37,3 | 22,9 | 2,4 | — | | | | | 6,73 |

## ЛИТЕРАТУРА

1. *И. Варунциян*—Еще о густоте посева хлопчатника. Ж. Хлопковое дело. 1, 1930.
2. С. *Джерих* Возделывание хлопчатника с суженными междурядиями. Советское хлопководство, 7, 1941.
3. *Б. П. Страумал*—Сорта хлопчатника. 1948.
4. *Г. Г. Туманян* О возможности разведения египетского хлопчатника в Арм. ССР. 1946.

С. П. Мандоян

# Об образовании первого симподия хлопчатника в условиях Армянской ССР

## Резюме

Высота закладки первого симподия на стебле хлопчатника предопределяет его скороспелость. В связи с этим изучалось влияние некоторых факторов на ускорение появления первого симподия.

На опытном участке Института генетики и селекции растений АН в колхозе с. Паракар Эчмиадзинского района выяснено, что на средних почвах с применением перекрестной культивации густота посева не влияет на процесс образования первого симподия, иначе говоря, на процесс созревания хлопка. При этом сопоставлялась густота в букете с 8 кустами на двухстрочном посеве с густотой букета с 2 кустами на обыкновенном рядовом посеве.

При неблагоприятных условиях вегетационного периода у поздиеспелых сортов сильно затягивается созревание хлопчатника, ввиду того, что задерживается закладка первого симподия.